

շնորք առաքելական եւ օրհնութիւն բազմազեղուն,  
 եւ եկեալ ժամանեցի ի վերայ ուղղադաւան առա-  
 մազեան եւ պարզեպի ասգին Հայոց: Ծանկբ սի-  
 բելեք իմ ի Տէր զի ասէ Սրբազան առաքեալն.  
 Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ մերոյ սիրելին Յօ-  
 Տաննէս ի կաթողիկեայց թղթոյն. թէ փորձեցէք  
 զՏոգիսն. որք թէ յԱստուծոյ իցեն եկեալ. վասն  
 որոյ պարտ է մեծաւորած առաւել քննութիւն առ-  
 նել, ի վերայ իւրաքանչիւր անձանց, եւ մանաւանդ  
 փորձել զնոսա, որք ընդ լծով կարգի, եւ սուրբ  
 աստիճանի մտանելոց. եւ այնպէս յառաջացուցա-  
 նել զգործն: Ուստի եւ ես բորձեալ եւ քննեալ  
 զկոստանդնուպոլսեցի Առապ քեհեա օղու կոչե-  
 ցեալ գտիրացու Յակոբն եւ մտերիմ ընտրութեամբ  
 բորձ գտեալ. Որ եկեալ էր առ իս նամակաւ, եւ  
 հրամանաւ բոխանորդ Եպիսկոպոսի ի վերայ ասգիս  
 Հայոց Տեառն ՅօՏաննու եւ որդի Փրոփականտայի  
 Աստուածաբանութեան վարդապետի. եւ ես զե-  
 կեալ նամակն ընդեռցի յոյժ գտի արժանի Սրբոյ  
 աստիճանի. քանզի անձեալ էր անդր քան զչափն.  
 Որ գրեալ էր ի մէջ նամակին իւրոյ: Յամի Տեառն  
 1741. Իսկ եւ Հայոց ՌՃՂ. ի յունիսի ԺԲ. ի մե-  
 ծահոչակ եւ ի յաշխարհածաւալ շնորհարաշխու-  
 թեան Պէնտէկոստէի աւուրն ի գալստեան Հոգւոյն  
 սրբոյ ի դասս առաքելոցն զսա ձեռնադրեալ օրհ-  
 նեցի Քահանայ յայգւոջ Տեառն մերոյ Յիսուսի  
 Քրիստոսի, ի վանս իմոյ որ կառուցեալ է անուան  
 սրբոյն Գէորգա զօրավարին ի Գեվոյցան, ուրախու-  
 թեամբ եւ հոգեւոր ցնծութեամբ, վասն որոյ ըստ  
 իւրոց բաղձանաց եւ պաղատանաց եդի զանուն նորա  
 Մեսրօպ, եւ կոչեցաւ Տէր Մեսրօպ: Ոչ դբ ունի  
 իշխանութիւն դմա հակառակել, սմա հակառակքն,  
 մեզ եւ սուրբ հաւատոյ Սիւհոթոսաց եւ սրբոյն  
 Գրիգորի լուսաւորչի են հակառակ: Լուարուք կա-  
 տարողք զհրամանս Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-  
 տոսի: Կապեալ ի սմանէ ի վերայ երկրի եղիցի կա-